

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍԱՀԱՆ

Իրիւն թիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանշցման տողը
20 լանդիլ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵԻ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Յ Է

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция


на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА

Գրոշքիւնք եւս
չեմ տրոշիր

ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԻՆՆԻ



Հարց.— Հայերս անմիջական
ի՞նչ բանի պէտք ունինք :

Պատ.— Մեր բնագաւառին ա-
զատութեանը, որով կարենանք մեր
սեփական ստացուածքներուն ար-
դիւնքը վայելել, մեր կեանքը ու
պատիւը ապահովել :

Հարց.— Մեր սեփական ստաց-
ուածքները ո՞ր բն :

Պատ.— Մեր սեփական ստաց-
ուածքները, այսինքն, արտ, ա-
գարակ, տուն, այգի եւ այլն, մեր
բնագաւառին, Հայաստանի մէջ
են : Այդ սեփականութեանը ար-
դիւնքը եթէ մեր գիւղացիներու եւ
քաղաքացիներու ձեռքէն չը յա-
փշտակուի, աշխարհի էն բարե-
կեցիկ ժողովուրդը Հայերս կրի-
լանք : Երբովհետեւ ամէն հայ գիւ-
ղացի իր ընտանիքին պէտքէն ա-
ւելին արտադրող հողեր ունի հոն :
Հայերս երջանիկ ըլլալու համար
մեր ինչքը եւ մեր կեանքը մեզ ա-
պահովող բարեկարգ կառավարու-
թենէ մը գաւառ ուրիշ բանի մը
պէտք չունինք : Մնացեալը մենք
մեր միջոցներով կրնանք ձեռք բե-
րել :

Հարց.— Այդ կառավարութիւնը
ի՞նչ եղանակաւ կազմուելու է, մի-
ապետական, հանրապետական,
ընկերավարական :

Պատ.— Մեր երկրին համար
սահմանադրական միապետութիւնը
առ այժմ էն նպատակայարմարն է :
Որովհետեւ հանրապետական կա-
ռավարութիւն մը կազմուելու եւ այդ
դրութեամբ կառավարուելու հա-
մար դեռ պէտք եղած զարգացումը
չունի Հայաստանի բնակչութիւնը
որ կէս առ կէս վայրենի, կրօնա-
մոլ եւ բացարձակապէս տգէտ ցե-
ղերէ կը բաղկանայ, իսկ մնացեալ
կէսը կամ մէկ կարեւոր մասը՝ որ
Հայերս կը ներկայացնենք, դեռ
ընդունակ չէ հանրապետութիւն մը
կազմուելու :

Հարց.— Երբ հանրապետական
դրութիւնը անյարմար կը տեսնուի
Հայաստանի համար, ի՞նչ պիտի
ըսէք ընկերավարութեան զոր մեր
կարգ մը յեղափոխականները ի-
մենց կուտակցութեան «հիմնական

սկզբունք» բրած են եւ որուն հա-
մար ամէն բան զոհելու պատրաս-
տութիւն ցոյց կուտան :

Պատ.— Մեր այդ ընկերավարու-
թիւն քարոզող յեղափոխականները
առանց գործնական կեանքի մէջ
ապրած ըլլալու եւ առանց Հայաս-
տանի բնակչութեան տնտեսական
պայմանները մօտէն ուսումնասի
րելու, ինքզինքնին տուած են իշ-
րոպայի ընկերաբաններու այն
վարդապետութեանը որոնք չափ-
ուած ձեւերով են այդ երկրին
տնտեսական դրութեան վրայ :
Հոն, Եւրոպայի շատ մը կողմերը,
ժողովուրդին ահագին մեծամաս-
նութիւնը անժառանգ ծնած եւ
դատապարտուած է անժառանգ
մեռնելու : Հոն գործաւոր դասա-
կարգը որ ստուար թիւը կը
կազմէ, պատանկութեան տարի-
քէն մինչեւ ծերութիւնը՝ գործա-
րանատէրերու կամ ագարակատէ-
րերու յաւիտեական ծառան է :
Երբովհետեւ ինք սեփականութենէ
հոգե զուրկ է, իր աշխատութեան
արդիւնքին մեծագոյն մասը իր տի-
րոջ թողուլ դատապարտուած է, եւ
եթէ չաբաթ մը անդործ մնայ,
երկրորդ շաբթուն անթոթութենէ
կը մեռնի : Ինչպէս Հայաստանի
ժողովուրդը մանաւանդ Հայերս
պէտքէն աւելի սեփական հողերու
եւ ինքնազուլս արհեստներու տէր
ըլլալով, բնաւ այդ օտար վա-
րդապետութեան հետեւելու պէտքը
չունինք, վարդապետութիւն մը որ
եւրոպական եւ ոչ մէկ երկրի մէջ
պաշտօնապէս ընդունուած չըլլալէ
զատ, մեր հայրենիքի դատը վճ-
ռելու կոչում ունեցող պետութիւն-
ներէն առաւել կամ նուազ կը հա-
լածուի : Մեր կարգ մը յեղափո-
խականներու մեզ համար դեռ ան-
պէտ եղող այդ վարդապետու-
թեան անձնատուր ըլլալին եւ ազգն
ալ դէպի այդ հոսանքը մղել ու-
ղելին ոչ թէ միայն ծիծաղելի
կապկութիւն մըն է, այլ նաեւ մեր
հայրենիքի դատին յաջողութիւնը
վտանգող անխոհեմ քայլ մըն է :

Հարց.— Եթէ այդպէս է, ին-
չու համար Հին Հնչակեան հատ-
ւածը յամառաբար անոր կողմէն կը
մնայ «մեր հիմնական գաղափարը
կամ սկզբունքը ընկերավարութիւնն

է, եւ ով որ այս գաղափարը իրեն
հիմ չընդուներ, նա յեղափոխական
չէ» բռնող :

Պատ.— Ստոր պատճառը քիչ
մը պարզեմ : Այդ Հին Հնչակ. հատ-
ուած ճանչցածը, քանի մը մար-
դերէ կը կառավարուի, որոնք
քիչ բացառութեամբ իրենց հացի
տաշտ բրած են կոպկասի նաւթա-
հանքերու եւ քարիւղի գործարան-
ներու մէջ աշխատող խեղճ գոր-
ծաւոր եւ անժառանգ դասակարգ-
աւանդ մեծաւ մասամբ Գիւրտին
թուրքն, թիւրքին եւսթաղանէն—
որոնք մեր թրքահայրցոյ կողմ ու
կունակը կարեւորտեն միշտ—այն.
չափ բան չեն հասկնար, որչափ
իրենց հանքատիրոջ կամ գործա-
րանատիրոջ կեղեքումը, իրենց աշ-
խատութեան ժամին եւ աւուրչէ-
քին աւելնալը կամ պակսելը : Այս
պատճառաւ հին Հնչակ. հատուա-
ծի գործիչները այդ կոպկաստայ
գործաւոր դասուն քմաց համեմատ
գրել եւ քարոզել դատապարտուած
են : Երբովհետեւ այդ կերպ վարուե-
լով միայն իրենց կարելի կըլլայ
այդ խեղճերուն քուակը շահագոր-
ծել եւ իրենց հացը ապահովել :
Եթէ այդպէս չը վարուէին կը վա-
տահեցնեմ ձեզ թէ, այդ հատ-
ուածը 7-8 տարիէ ի վեր գոյու-
թենէ դուրս գլխի ըլլալ, վա-
սնդի անոր ուժը գլխաւորաբար
կոպկաստայ գործաւոր անժա-
ռանգ դասակարգը կը կազմէ :
Այս խեղճերը աւելի կը մտածեն
իրենց գործարանատիրոջ դէմ կըռ-
ուել որ ցմահ իր հաշտոյն կաշ-
խատցնէ զիրենք միայն չոր հացի
մը փոխարէն, քան թէ թուրք
բռնակալութեան դէմ՝ որ մեր
կեանքը կը հնձէ, պատիւը ազա-
տութիւնը կը բռնաբարէ ու ինչքը
կը կոտորէ : Անոնք իրենց ցաւը
կը հասկնան, իսկ մենք մեր ցաւը
ցաւեր որոնք իրարմէ ահագնապէս
կը տարբերին, եւ բնականապէս
դարմաններն ալ տարբեր են : Եւ
նոնք հացը երկրոտ ուտել կուզեն,
մենք թրքահայրցոյ կեանք կու-
զենք, կեանքի եւ ինչքի ապահո-
վութիւն : Եթէ այս ապահովու-
թիւնը տրուի, մեր հացը արդէն
եփուտ է, գործարանը, արտը
մերն է, մենք ենք տէր, եւ մեր

աշխատութեան արդիւնքը ուղղա-
կի եւ ամբողջովին մերն է, ոչ թէ
հանքատիրոջ, գաղթաբաւարին կամ
պոռթոքաւորին :

Այդ ինքզինքնին ազգասէր ձե-
ւացնող եւ ընկերավարականութիւն
կոպկող հայ յեղափոխականները,
կրնան ցոյց տալ Հայաստանցի հայ
ընտանիք մը որ իր սեփական բնա-
կարանը, արտերը եւ այգին չու-
նենայ : Բնաւ, Մինչդեռ ընկեր-
վարական գաղափարը ծնունդ ա-
ռած է այդ սեփականութիւննե-
րէն զուրկ եղող Եւրոպայի ան-
ժառանգ դասակարգի վիճակէն :
Այս խեղճերն են որ ամէն սեփա-
կանութենէ զրկուած (ոչ տուն
ունին ոչ հող) քսան հոգին մէկ
սենեակի մէջ սարսափալի պէս
չարուած գիշերելու եւ ալէն առա-
ւօտ կանուխ գործատուն վաղելով
օրն իրուն չալաչար աշխատելու
դատապարտուած են ցմահ, այսպէս
մեծ ու փոքր հայր ու վաւակ կին
եւ աղջիկ :

Կը տեսնէք թէ մեր Հայաս-
տանի դատը այդ չէ : Մենք ա-
զատ հայրենիք կուզինք ունենալ,
Հայուն հայրենիքը, Հայաստանը :
Մինչդեռ ընկերավարութիւնը հայ-
րենիք չունի : Հետեւաբար ընկեր-
վարութիւնը իրենց «հիմնական քա-
կըսքունք» ընտրող մաս մը հայ
յեղափոխականները մեզ հայրենիք
չեն կարող խոստանալ, թուրքին
եւ հայուն միջեւ տարբերութիւն
չեն կարող դնել եթէ խոստանան
եթէ տարբերութիւն դնել ձեւա-
ցնեն իրենց ընկերավարական սկզբուն-
քին դէմ մեղանշած կըլլան, ուստի
կը կեղծեն :

Հայ ժողովուրդը պէտք չէ կեղ-
ծերու հետ գործ ունենայ : Եւսթե-
կրնան իրենց աշխարհաքաղաքա-
ցիական կամ ընկերավարական քա-
րոզները Եւրոպայի հրէայ, գեր-
ման, իտալացի եւ ռուս միլիոնա-
ւոր անժառանգ գործաւորներուն
քարոզել : Հայը անկեղծ հայրենա-
սէրի, թուրք բռնակալութենէն
ազատելու եւ զուտ հայկական ին-
նավարութիւն հաստատելու քարոզ-
ներ եւ ուղղամի այս նպատակին
ձգտող գործունէութիւն կուզէ,
որովհետեւ հայուն այժմու միակ
պէտքը այդ է : Ընկերավարական մը

որ ազգութեան եւ հայրենիքի խտրի պէտք չէ դնէ ըստ իրենց վարդապետութեան ինչպէս թուրքին դէմ գնդակ արձակելու եւ թուրքի տեղ Հայաստան հաստատելու խտրական եւ օտարատեայ քայլը պիտի կրնայ առնել: Եթէ առնէ, ահոր ընկերավարութիւնը կեղծ է, եթէ չառնէ հայրենասիրութիւնը կեղծ:

Այս երկու սկզբունքները իրարու հետ չեն կարող հաշտուիլ: Կամ մին ընտրելու է կամ միւսը: Երկուքը մէկէն չըլլար: Երկուքը իր մտքին մէջ միացուած ձեւացողները կրնանք ըսել աւելի իրենց հացին մտահոգութեամբ կը գրեն ու կը խօսին քան թէ հայրենասիրական կամ ընկերավարական ոգիին ներշնչումով:

(Շարունակելի)

ՍԵՐՊԻԱ

(ՄԵՐ ՄԱՍՆԱՌԻ ԹԵՄԱՎԵՆ)

Երկրի մէջ բացարձակ խաղաղութիւն եւ անդորրութիւն կը տիրէ: Թագաւորին եւ թագուհւոյն սպաննուած ոչ մէկ ներքին խռովութեան տեղի չտուաւ:

Մայիս 29ին բոլոր ժողովուրդը գործուած դաւադրութեան լուրը առնելուն պէս ամէն տան պաշտամունքը եւ պաշտօնատուններու վրայ դրօշակներ պարզեց ի նշան ուրախութեան տրամաբան արտայայտութիւն երբէք չնշմարեցաւ: Այդ օրը Պէլկրատի մէջ զինուորական դասակարգը արդէն իւր փափաքին հասեր էր: առաւօտեան ժամը 9ին նախարարութեան աթոռին վրայ կը հրաւիրուէր Տ. Ա. ազգամովիչ ազատական կուսակցութեան պետը, որով նոր նախարարութիւն մը կը կազմուէր «Ժողովրդեան բարեկամ» անունով. եւ շուտ մը այդ անունով հրովարտական ստու

րագրուեցան, որոնք նոր երեսփոխանական ժողովը լուծուած հռչակեցին եւ հին ազգ. ժողովոյ կրեափոխանները Յունիս Զին մայրաքաղաք հրաւիրեցին նոր թագաւորը օրինաւորապէս ընտրելու եւ վաւերացնելու համար: Որոշեալ ժամուն Ազգ. ժողովը նոր պալատը գումարուած, քուէից քացարձակ մեծամասնութեամբ թագաւոր հռչակեց նախկին Սեւ-Կէօրկի որդին իշխան Բէթր, որ 45 տարիներէ ի վեր գրեթէ աքսորական կեանք մը կանցրէր հայրենիքէն հեռու: Անմիջապէս պատուիրակութիւն մը կազմուելով գնաց Ժնէվ, նոր թագաւորը հրաւիրելու Սերպիոյ թափուր գահին վրայ: այս պատուիրակութիւն պաշտօն ունի նաեւ սերպ թագաւորական թագը յանձնելու Ն. Վեհ. Բէթր Ա. Գարա-Կէօրկէվիչին: Հաւանօքն նոր թագաւորը իր թիկնապահներով ու չքախումբովը ամուսնոյ 11ին անձամբ պիտի ողջունէ Պէլկրատ (ճերմակ քաղաք) մայրաքաղաքը: Ընդունելութեան համար մեծ պապրատութիւններ կը տեսնուին:

Օտար վեհապետներէ շատերը այսպիսի յանդուգն սպանութեան հանդէպ լուռ կենալով հանդերձ, չնորհաւորական հեռագիրներ ուղղեցին նոր թագաւորին:

Ասորին ներքին գործոց նախարարը հրամայեց ժողովուրդին որ թէ, պաշտօնարաններու եւ թէ մասնաւորաց տուններու պատերէն վերցուին Օպրէնովիչ գերդաստանին պատկանող անձնաւորութեանց պատկերները եւ անոնց տեղ կախուի նոր թագաւորին նկարը:

Իսկ խեղճ մայր թագուհին, նախալին, դիմած է Աւստրիոյ կառավարութեան, խնդրելով որ միջորդէ իր Ալէքսանտր որդւոյն մարմինը փոխադրելու Ֆրանսա: Մինչդեռ սպաննուած այդ երիտասարդ թագաւորին մարմինը գիշեր ատեն տարած եւ անշուք կերպով մահապարտի նման թաղած էին իր վաղամեռիկ եղբոր իշխան Սէրկիէի գերեզմանին մէջ:

Ճիշտ չէ՞ որ նախկին նախարարապետ Յինցար Մարքովիչ պալատին մէջ թագաւորին հետ խորհրդակցելու

միջոցին սպաննուած ըլլայ, այլ իր տան մէջ սպայ մը վեցհարուածեանով զանի գնդակահար ըրած է: Նոյնպէս Ալէքսանտր թագաւորը յարձակումի միջոցին ունէ զինուորական զարկած չէ. այլ անկողնէն փախուստ տալով, դուռի մը ետեւ պահուած ու սարսափահար թագաւորը ու թագուհին զիրար համբուրած միջոցնուն տեղն ու տեղն նահատակուած են: Այս կերպով վերջացաւ Օպրէնովիչ տան վերջին շառաւիղն ալ, որ շատ մը խայտառակութիւններու թատր ըրած էր Սերպիան:

Ազգ. ժողովը ընդունեց նաեւ 1901ի սահմանադրութիւնէն զատ 1888ի օրէնքն ալ, որով վերջ կը տրուի 1901ի սահմանադրութեամբ հաստատուած Մերակոյտին եւս, որ ժողովուրդին վրայ աւելորդ բեռ մը եղած էր:

Ս. Թոյնիկեան

ՃԱՄՐՈՐԴԻ ՄԸ ՆՍՄԱԿԸ

Սիրելի ...

Հասնելուս պէս մեզ բանտ առաջնորդեցին. մեր չեղազած հարհարցումները մեզի ուղղեցին: Պաշտօնեաները անցագիրը կարգաւոր ձանձրութիւնը յանձն առնել չեն ուզեր: Երբ հարցնեն, «բանի տա. րիէ ի վեր պանդուխտ ես. ուրկէ՞ անցնելով գացիր եւ ո՞ր պետութեան նաւով, նաւին եւ նաւապետին անունը ինչ էր, կամ ի՞նչ դիմագծով մարդ էր. ի՞նչ խօսուեցաւ, եւ այլն:

Մեր մոկ ընկերը 12 տարի պանդխտութիւն ծաշած ըլլալով չկրցաւ որոշ պատասխաններ տալ, ուստի զանի ետ վերադարձուցին Պաթումի գծով, իսկ մենք Կուկէս ական օսմ. ոսկի տալով՝ իբրեւ սովորական տուրք՝ անցանք. կերթանք դէպի Հայաստան. մնաք բարով: Միայն կը յանձնարարեմ մեր հայրենակցաց որ չըլլայ թէ զան:

Տրապիզոն, 27 Մակիս

ՄԽՕ-ՇԱՀԷՆԻ

ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԹԱՂԱՌՄԻ

Ճիշդ այս վայրկեանին Փօթիէն Արարիկի Ս. Հ. անունով հայ մը եկաւ որ Միացեալ Նարանները պիտի թար. հետեւեալ սրտաճրկի պատմութիւնը ըրաւ Միւս-Շահէնի սպանութեան մասին. ինք եւս նոյն պանդխտին մէջ իջեւանած է եղբոր, ուր Միւսն սպանած էին. ներկայ գրտնուած է այդ սոսկալի ժամուն եւ կ'ըսէ:

«Միւսն մէկ քանի գիւղացիներով Սոխումէն Փօթի եկաւ նոյն պանդուխտը որ որ ես կը կենայի. Միւսն պանդխտին մէջ սենեակ մը վարձեց. երկուսեան ժամը 11ն էր երբ գեռ Միւսի հետ չորս հոգի կը խօսէին. խօսակցութենէ վերջ Միւսն սենեկին մէջ գանուած սեղանին վրայ նստակ կը գրէր. եւ նոյն ատեն այդ չորս հոգին ետեւի կողմը աթոռներ գրաւած էին եւ իրարու հետ Միւսին վրայ յարձակումի նշաններ կընէին. ասոնցմէ երկուքը սենեկին դուռնէն դուրս ելան. ու մնացած երկուքը Միւսն դեռ գրած միջոցին ետեւ: Կողմէն դանակներով կը յարձակին ու կ'սկսին կրուակէն հարուածել. Միւսն գետնի վրայ կ'սկսի կուրծքն ալ հարուածել, այնպէս որ 18 րոպէսէ վերջեր լացուած էր: Միւսի աղաղակին վրայ Մարգասպանները կը փախչին ու պանդխտապետէին իսկոյն կը վազէ. պանդխտապետէին լաց ու կ'սկսէ ձօնը գտնուող Վրացիներ եւ մօնք վազեցինք. եւ այս միջոցին էր որ կանխաւ դուրս ելնելով սպասող նոյն երկու հոգին Միւսն քաշկռակով դուրս կը հանէին. մենք արգիլեցինք. խեղճ Միւսն կը պոռար, «մէկուն բան մի ընէք, մէկը մի բռնէք», ու Միւսն մէկ ժամի չափ ապրեցաւ եւ մեռաւ. ուստիկանները եկան եւ այդ մարդիկը ձերբակալեցին. քանի մը ժամ վերջը կառավարութեան բժիշկը եկաւ ու Միւսի սիրտը ձեղքեց. երբոր սրտին կրկնակի առողջութիւնը տեսաւ որ (չաթալի պէս տնկուած էր) բժիշկը, ինքը երկու ձեռքերը ծուկերու

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(86)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՄԱՀԱՎՃԻՈՒԸ...

1895 ի զեկտեմբեր ամսոյ վերջն էր:

Սահմանները կը փչէր սաստկութեամբ մը: Փողոցները թանձր ձիւնով մը ծածկուած էին, ու հոն, տեղ տեղ պատնէշներու պէս ձիւնակոյտեր ձեւացած էին:

Վերջապահ ատեն էր: Այդ միջոցին, Վանայ Այգեւտան կոչուած արուարձանին մէկ անկիւնը գտնուող տունի մը առջին մարդը մը կանգ կ'առնէր ու դուռը կը զարնէր երկիւղալի զգուշութեամբ մը: Այս մարդը բարձրահասակ էր ու ծածկուած էր լախ ու երկայն վերաբեկի մը մէջ:

Երբ դուռը բացուեցաւ, մարդը ներս մտաւ ու սանդուխներէն վեր ելնելով հիւրանոց մ'առաջնորդուեցաւ: Հիւրանոցը գեղեցիկ կահաւորում մ'ունէր: Անձանօթ մարդը, որ հազիւ քսաներկու տարեկան կար, բաղմոցի մը վրայ նստեցաւ ու սպասեց:

Գիշ յետոյ ներս եկաւ մուշտակով ծածկուած կղերական մը, որ մեր ծանօթ Պօղոս եպիսկոպոսն

էր, այսինքն Լիւմ անապատի Վանայալը:

Երիտասարդը պփփաքով մը ոտքի ելաւ ու սպասեց որ Վանայալը բազմոցին վրայ նստի: Ան ատեն ծոցէն գրութիւն մը հանեց՝ եւ յանձնեց անոր:

— Ի՞նչ է սոս, հարցոց Վանայալը հպարտ չեղտով մը:

— Ձեմ գիտե՞ր... կարգա՞ք որ հասկնաք, պատասխանեց երիտասարդը:

Վանայալը բացաւ գրութիւնը, կարգաց զայն ու յետոյ գոչեց.

— Ո՞վ է հրամայող ինձի որ վանքը քաշուիմ ու կառավարութեան ներկայ ընթացքին դէմ բողոքեմ:

— Ազգային բարձրագոյն մարմինը... չեղանց երիտասարդը:

— Ինչպէ՞ս... Ազգային բարձրագոյն մարմինը ո՞րն է... բացառանչեց Վանայալը տեղէն վեր ելնելով: Միթէ՞ կառավարութեան մը մէջ կառավարութիւն մը հաստատուած է:

— Ներեցէ՛ք... իմ պարտականութիւնս չէ՛ ձեզի հասկցունել թէ՛ կառավարութեան մը մէջ կառավարութիւն մը հաստատուած է... ընդհանց երիտասարդը:

— Հապա... ի՞նչ է ձեր ըսելիքը:

— Պիտի ընդունիք այդ առաջարկուած երկու բողոքումները, թէ ո՛չ:

Վանայալը խոժոռ ու վէս կերպարանք սեւեւեւեւ երիտասարդին վրայ ու անոր այդ սպանական ձայնէն պար մը ստորուաց. յետոյ ճիւղ մը ընկելով ինքնիւ վրայ, գոչեց.

— Ես մէկէ մը կ'սխալմ չունիմ... հետեւաբար չեմ կարող ընդունել ո՛չ վանքը քաշուիլ եւ ոչ ալ

կառավարութեան ներկայ ընթացքին դէմ բողոքել...

— Խիստ լա՛ւ, կը մերժե՛ք, ընդհանց երիտասարդը:

— Կը մերժեմ:

— Բացարձակապէ՞ս:

— Այո՛, բացարձակապէ՞ս:

— Ուրեմն, առէ՛ք այս գրութիւնն ալ, ընդհանց երիտասարդը՝ ու ծոցէն հանելով ուրիշ գրութիւն մը յանձնեց Վանայալը:

Վանայալը բանալու դռնը բաց արեւ, երբ երիտասարդը կ'անց մը հեռացաւ ու տունէն դուրս նետեց ինքզինքը:

Պօղոս եպիսկոպոսը սոսկումով մը կարգաց հետեւեալ գրութիւնը:

ՄԱՀԱՎՃԻՈՒԸ

1895 հոկտ. 27, Վան

Ազգային Գերագոյն Մարմին եւ

Առաջնորդական կառավարութիւն

Վանայ նահանգին...

Թիի 23

«... Նկատելով որ թուրք կառավարութիւնը ձեռ մեղաւորութեամբ գործադրել տուաւ նահանգի թիմար կոչուած գեղեցիկ թաւան:

«Նկատելով որ ներկայ արեւմտիկ օրերու մէջ ձեռ քաղաքը գտնուել ու վանքը լքել դաւաճանութիւն մըն է:

«Նկատելով որ՝ հակառակ ձեր կողման ու ձեր բարձր պաշտօնին՝ դուք Աստուծոյ եւ խղճի հանդէպ

զարնելով սկսաւ լալ, ըսելով թէ մեղք չէր որ այսպիսի քաջ, առողջ եւ առողջ երիտասարդ մը մեռնէր ինչպէս ձեռքերնին վրայ գնաց, դեռ հարիւր տարի կայրէր այս սիրտը ո՛րք ունեցող մէկը: Ուրիշ երկու թիշկներու եւ կառավարութեան հրամանով Միսոն առինք եւ եկեղեցի տարինք: հետեւեալ օրը թաղմանը ծախքերը մենք ժողովուրդս տուինք: յուզս րկաւորութիւնը փառաւոր կերպով կատարուեցաւ, այնպէս որ հաղարնելով խուռն բազմութիւն կար: ամէնք սուգի մէջ էին հայ, վրացի, ռուս եւ քանի մի թուրք: Փոթիի քաղաքին խառնութեանը քոյ էին, այդ օրը Սոխում մարդ չմնաց Փոթի թափուեցաւ: Ժողովուրդը չափէն աւելի յուզուած էր, փոքրէն մինչեւ մեծը կուլար այդպիսի անմասն քաջի մը համար: Միսոն պերզեալատուութեան թաղեցինք: Գերեզմանին դիւան եւ ոտքին կողմերը մէյմէկ հատ խոշոր ծառեր անկեցինք ու քովիս զմի լիովը ի յիշատակ իւր անունը փորեցինք այդ ծառերուն բունին վրայ:»

«Միտայի Ձիթճեանի եւ ինչպիսիք եանի սպաննելու հրահանգները Լոնտոնէն Սազունի-Արզումանեանցէ Միսոն հոն հանեցէն շատ առաջ եկած էին, այնպէս որ շատքս գրեցինք, գրաւոր թուղթեր քանի մը անձերու քով տեսանք: Ես ու եւ ընկերութեան չեմ պատկանիր ու տարիքս առած մէկն եմ սակայն կոտորի այնպիսիներու ձեռքը որ վրայ գնաց: Միտայի պալատականները կառավարութեան քննուած եւ ուստիկանութեան, քանանային եւ կարեւոր հայու մը կողմանէ կը դուռնէն ու հոն կը մնան առայժմ:»

ԹԻԱՊԱՐՏԸ

Այս երկասիրութեան Բ. հասորին 400 երեսները տպագրուած են: Կնաց եալը որ 25 երեսի չափ կը լլայ, երկու շաբաթէ կամբողջանայ:

Ա. հատորը (162 երես) 1 ֆրանք
Բ. հատորը (424 երես) 2 »



ուրացող մեղած էք . . .

«Վերջապէս»

«Նկատելով որ ձեր ձեռքը չարագործներուն տուած էք եւ մեր եղբայրներու, մեր մայրերու եւ մեր քոյրերու արեան մէջ կը թափնէք:

«Ազգային Գերագոյն Մարմինը եւ Առեւտրական-եայ կառավարութիւնը Վանայ նահանգին» ձեռք Մահուան կը դատապարտէ . . . »:

— Ի՞նչ է այս . . . թշուառականներ, բացազանչեց Վանահայրը կատարողներէն կրակ կուրած ձայնով մը ու ոտքի վրայ ցատկէց:

Բայց որչափ զարմայաւ, երբ տեսաւ որ գէմը մէկը չըկար . . . ինքը միտակ էր: Իսկ երբ տեսարդը մեկնած էր:

— Ո՞ր է . . . ո՞ր է ատ սրիկան, ոչոքաց Վանահայրը հիւրանոցին դուռը բանալով:

Ո՛չ . . . մէկը չըկար: Միայն թէ՛ տունին մէջ գտնուողները քովը վազեցին ու հարցուցին եղբուր-թիւնը:

— Բան մը չըկայ . . . բան մը չըկայ . . . զողողաց Վանահայրն ու ջանքախուսած վիճակով մը իր առանձնարանը քաշուեցաւ:

ՍԼԱՅԱԳ ԿԻՆԸ

Միւր Սլապար հաղարպետ փաշային ձիերը թիմ-րելու զբաղած էր անուրի մէջ ու կը անտեսար ինքնիրեն հետեւեալ երգը:

ՆԱՄԱԿ ԽՄԱՐՈՒՄԻԹԵԱՆ *)



Արզումանեանց-Սազունի մարգա-կերպ հրէշներուն գործած ոճիւրը որա-կող բառ մը անգամ կարելի չէ գտնել: այդ տեսակ դիւային խորհուրդներ միայն ապականուած հոգիներու մէջ կրնան ձկնիլ, եւ այդ հրէշները ըն-դունակ են տակաւին աւելի դժոխա-յին դաւեր կատարելու, որովհետեւ ա-տոնք ոչ միայն հայ չեն, այլ մարդ չեն . . . կարելի քան չէ երեւակա-յիլ ատոնց ներքինը, հոգեկանը: Երբ թիւրքերը ծանօթ են իրենց ներքին ու արտաքինովը, իսկ ատոնք անոնցմէ աւելի նեխած ու այլախո-ւած են: Ինծի համար ոչ մի վկա-յութիւն ըլլայ ան պաշտօնական կնի-քով իսկ կնքուած, մագաչափ նշա-նակութիւն չունի համոզուելու: հա-մար թէ Արզումանեանց-Սազունի կոչուածները ի՞նչ տեսակ ձեռագրեր են: որոնք անձամբ եւ ճանչցած եւ ուստիմաստիւրած ըլլալու տիպեր հարկը ունեցիր եմ: Ատոնց գոյութիւնը հա-յութեան համար ամօթ, նախատինք ու պատիժ մէկ եւ ես չեմ հուսար թէ հայութիւնը այնքան անտարբեր զոտ-նուի որ թոյլ տայ այդպիսի վիժուած-ներու գոյութեանը, որ չեն անոնց հրապարակային մատնութիւնը: որ լո՛ւ անոնց գործած դաւերուն եւ ոճիւրի: Ամօթ է, յանցանք է մանաւանդ այնպիսի մարմնոյ մը որ կուսակցա-կան անձուկ մտահոգութիւններով գալարուած, մարդակերպ հրէշներուն

*) Նամակագիրը Պ. Կոռնի իր այս ծածկանունով բոլոր հայ յեղափոխա-կաններուն ծանօթ է: Ինք Զօկ-Մար-գուանի կուռնի ատեն Շահէնի հետ գտնուելէ զատ, Կիլիկիոյ ուրիշ կէ-տերուն մէջ ալ կուռն է իբրեւ Հըն-չակեան անձնուէր գործիչ, ինք մին-չեւ վերջ հին Հնչակեաններէ յարգ-ուած է եւ ատոնց վերջին ընդհ. ժողո-վին պատգամաւոր ընտրուած էր Ա-մերիկայէ: Իր այս հանգամանքները ստիպեցին մեզ ներկայ նամակը նոյ-նութեամբ հրատարակելու իր առա-ջարկը չմերժել:

փոխունքները տարածելու, սրբաց-նելու կը զիջանի. ո՞ր է ժիրայր-ներու, Պետոներու անուամբ խօսող ներշնչող յեղափոխական հպարտ եւ տիրական զրացումը գիտակ-ցաբար ոճրագործներու ձեռք տալը կը նշանակէ նոյն ոճրագործներուն ա-րեւնոտ, եղբայրասպան ձեռքերը լը-գել

Յարգանքներով
ԿՈՌՈՒՆԿ

1903 Յունիս 10

.....

ԱԶԳԱՅԻՆ

Կիլիկիոյ Ս. Սահակ Կա-թողիկոսը, ինչպէս գրած են Ատա-նայէ, Պատրաստութիւններ կը տես-նէ ուղիւ որութեան համար: մէկ ա-միսէն Պոլիս պիտի գտնուի:

— Նորին Ամենապատուութիւնը իր կաթողիկոսական իրաւասութեան տակ գտնուող Իսկէնտէրունի, Հայէպի, Քիլիսի, Այնթապի եւ Մարաշի Առաջ-փոխանորդներուն ու ժողովրդեան ուղղեալ կոնդակ մը զրկելով, կը յայտնէ թէ թէպէտ իրեն պէտք էր անձամբ այցելել վիճակները, սակայն երկար տարիներէ իվեր զիջուած խն-դիրներու կարգադրութիւնները չեն թոյլագրեր իրեն այդ պարտքը ան-ձամբ կատարելու: ուստի Տ. Կարա-պետ Վ. Տ. Կարապետեանը կը զրկէ իբրեւ այցելու քննիչ, յանձնարարե-լով անոր օրպէսզի Գաւառ, Ժողովներ եւ Տնտես, Ը. Աւսումն. Խորհուրդներ կ'զմէ, կրթական, կրօնական եւ ա-մուսնական գործոց մօտէն ծանօթա-նայ, Աթոռին իրաւունքները եւ հա-չիւնները նայի ու տեղեկագրէ: Նոյն կոնդակով յիշած է նաեւ թէ Աթոռը ընդերկար թափուր մնայէն եւ անհա-չիւ տնտեսութիւններու պատճառա-նիւթական անձուկ ու կիսաւեր վի-ճակի մը մատուցած ըլլալով, վերա-նորոգելու եւ ժառանգաւորաց վար-ժարան մը չինելու համար Կիլիկիոյ ոց օժանդակութեան կը կարօտի, ուստի

Տ. Կարապետ Վ. ի ժապահինեալ տօ-մար մը յանձնուած է արձանագրելու համար ընդունուած նուէրները:

— ԲԵՐՍՅՈՒ ԵԿԵՂԵՆՆԵՐՈՅ ՍԵՓԱԿԱՆ մէկ գետնին վրայ կալուածներ չինե-լու եւ արդիւնքը նոյն եկեղեցւոյ եւ վարժարանին յատկացնելու նպատա-կաւ 3070 ոսկի նուիրած է Տ. Նշան Գազազեան: Այս բարեգէտ անձնաւո-րութիւնը իր անունը յայտնել չէր ուզած, բայց վերջապէս լրագրիւնները յաջողած են իմանալ ու հրատարակել:

— ՊԱՍՏՈՅ քաղաքական բժշկա-կան վարժարանի այս տարւան 14 ընթացաւարտներուն մէջ կան 3 հա-յեր, Տ. Տ. Կարապետ Պարոնեան է-տիրենցի, Պետրոս Գալայճեան Կեսա-րացի եւ Երուանդ Բսրեղեան Պոլսե-ցի:

Կիլիկիոյ մէջ ինչպստ Զէյթու-նի սարքուած երկկոյթ մը 20 անգլ. ոսկիի չափ գոտ հատոյթ դոյացած է:

— ԲԱՐՍԻԶԻ Տ. Վառձապուհ քա-հանան Զէյթունի համար 835 ֆր. հանգանակած է, իսկ Տ. Մ. Զէրազ իր թերթի միջոցաւ սկսած հանգա-նակութիւնը 1175.75 ֆր. ի հասու-ցած է:

— ԻՏԱԼԻՅՈՒ Մէջ հայանպատ մի-թիւնները կը շարունակուին: Միա-նի ժողովրդական համալսարանին մէջ Մայիս 21ին Կրկին բանախօսութիւն տեղի ունեցաւ Մ. Առտուինոյի կողմէ:

ԲԲՈ-ԱՐՄԷՆԻԱ կը գրէ թէ միթիւնկ մըն ալ տեղի պիտի ունենայ իմաստյ Նաբոլիի մէջ. քաղաքապետութեան 30 խորհրդականներ համակրութիւն յայտնած են եւ երեսփոխան Մ. Մի-ռապէլի հոն պիտի բռնախօսէ:

— Պետակ. Խորհրդոյ անգամ Արքահա՛մ բաշաւարտունութիւն ստացած է Վիեն-նա երթալու իր խանգարուած առող-ջութիւնը դարմանել տալու համար:

— Մ'անաւօր նամակէ մը առնե-լով մեզ տեղեկութիւն կը տրուի թէ քիւրտերը Երիզայի կ'առնի գիւղը եւ Ս. Լուսաւորիչ Աւագ վանքը կողպատած են: նաեւ Գալուստ Բրոխորանեանը (որդի Տ. Վարդան Ծ. Վ. Տեղիտորանեանի) նահատա-կեր են:

«Ամէն տեղ մահը մի է

«Մարդս մէկ անգամ կը մեռնի:

«Բայց երանի՛ որ իր Աղբին

«Ազատութեան կը գոհուի . . . »:

Բայց չը շարունակեց, որովհետեւ դուռը կամա-ցուկ մը ձեռաց ու ինքը հասկցաւ թէ մէկը ներս մը-տաւ: Անմիջապէս մէկդի դուռը քերողը, որ երկաթէ շինուած էր ու ակոսներ ունէր՝ ձիերուն մարմինը մաքրելու համար, պահ մը կեցաւ ու սպասեց: Յե-տոյ յառաջանալով դէպի դուռին կողմը տեսաւ որ թուրք կին մը կեցած էր՝ բոլորովին ծածկուած իր նիւստով, զեղնած ու տղտոտ ֆէրաճէին մէջ:

— Ի՞նչ կուզես, հարցուց Միւր Սլապար, որ կարծեց թէ մուրացիկ կին մըն էր ան:

— Բեզ կուզեմ, մրմնջեց ֆէրաճէյի տակ ծափ-կուած կինը:

— Ինձի՞ կուզես . . . կրկնեց Միւր Սլապար զար-մացական չեչուով մը:

— Ո՛հ, այո՛:

— Բան մը ունի՞ս ըսելու:

— Ունիմ:

— Ուրեմն յայտնէ՛ . . . ես սպասելու ժամանակ չունիմ: Զիւրուէն թիմարը չը վերջացուցի:

— Կուզէ՞ գիտնալ թէ ի՞նչ ազգ ես դուն:

— Ե՛ս:

Այո՛:

— Գուրտ եմ:

— Հիւսո՞ւ տեղէ:

— Չէ՛. . . մէկ երկու օրուան չափ:

— Ընտանիք ունի՞ս:

— Բան մը չունիմ:

— Ըսել է թէ՛ բնա՛ւ կարգուած չե՛ս:

— Ի՞նչ պիտի ընեմ կարգուել . . . ասանկ ապ-րելով պիտի կրնամ ընտանիք նայիլ:

— Ատանկ է . . . բայց մարդ ըսածդ առանց ըն-տանիքի չըլլար: Ներեցէ՛ք ի՞նչ է ձեր անունը:

— Նաւո է անունս:

— Աղէ՛կ, Գիւրգայ Նաւո՛, կարգուելու բնա՛ւ միտք չունի՞ս:

— Ամենեւին:

— Գանի որ ամենեւին կըսես, ալ չեմ համարձա-կիր քեզի առաջարկ մը ընելու:

— Ի՞նչ առաջարկ է:

— Մեր թաղին մէջ աղուոր ու անման աղջիկ մը կայ . . .

— Է՞յ . . .

— Կամենամ քեզի:

— Վա՛յ . . . քանի՞ տարեկան է:

— Դեռ մատ մը չօճուի է, Գիւրգայ Նաւո՛, ի՞նչ կը հարցունես . . . ըլլայ ըլլա՛յ՝ տանեւնիդ տա-րու, աւելին մի՛ փնտրես:

Միւր Սլապար հոգեկան հառաջանք մը հանեց սրտէն ու դառն ժպիտ մը պատկերացուց իր թօշնած չրթ-ներուն վրայ: յետոյ կսկծալի ձայնով մը մրմնջեց:

— Չէ՛, կնիկ դաւա՛կ, չէ՛. . . Աստուած ատ աղջիկը տիրոջը պահէ: Ես յիսուն տարեկանէս ան-դին խաղ չեմ կրնար սորվիլ . . . պատառ մը կտաւին եւ կամ թէ ափ մը հողին ի՞նչ է եղեր որ . . .

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԻՍ

Հէր կիւն Մաքէթոնիտան պու- կար կազմեալար զնա վերինն մա- լիւմաթ պիւնէն, զօմիթէ չէթէ- լերի թիւրք ասքերլերի վէ պաշը- պօզուզլար իւն չարքըլմագտա տըրլար: Թարաֆէյնտէն թէլէֆի- յաթ էքսիկ օլմայօր:

— Պապը Ալինին սօն պիւր գա- րարը իւզրէ, հիւքիւմէթ մէմուր- լարը՝ հէր նէ տէրէճէտէ վէ սը- նըֆտա օլուր իսէ օլսուն, մէմու- րիյէթէ կիւրէճէքլերի էսնատէ՝ Սուլթանա վէ հիւքիւմէթէ սատըգ պուլընաճազլար զնա տայիւր եէմին իտէճէքլեր:

— Մօնաստըր վիլայէթի տախի- լինտէ կէչնէլերտէ զօմիթալար թուլմագ պէհանէսի իւն թիւրք ասքերլերին թօր տարպէլերի իւն հագուպ խարապ իթմիշ օլտըզլա- րը Սմարտէչ նամ պուկար քէօ- յիւն խանէլերին հիւքիւմէթին մէ- սարիֆի իւն եաբմագ վէ էհալիէ 400.500 քիւն միսիւր իանէ իթմիշ տիւր: Ֆազաթ գապահաթսըզ գաթլ օլընան պիշարէլեր իչիւն նէ՝ թազմինաթ վերիլէճէք տիւր:

ՏԱԽԻԼԻԹԷ

Մ. Նաչօպիչ էվէլեր ճուսա կիւնիւ Սուլթանըն հուզուրընա գապուլ օլընտըզընտուն. վէ Սատ- րազամ թարաֆընտան մախսուս քէչիտէ օլընան պիւր զիյաֆէթլէ թալիթի օլընտըզընտան սօնրա, պու բէրչէնպէ կիւնիւ Սօֆիայա վասըլ օլմուշ աըր: Մէզքիւր կիւն- տէ վիւքէլա իւլիսի ժէնէրալ Բէթ- րով իւն ուզուն պիւր միւլազաթտա պուլընմըշ տըր, Մ. Նաչօպիչին մէմուրիյէթի տահա խիթամ պուլ- մամըշ վէ եագընտա թէքրար Սթանպուլ կիտէճէք տէյօրլար: Շու կիթմէսի իւն նէ սէմէրէ հու- սուլա կէթիւրտիկի չիմտիլիք էսրար թուլթուլմագտա տըր: Ֆազաթ էճնէպի կազմեալարըն ըիվայէ- թինէ կէօրէ, Մ. Նաչօպիչին «Մա- քէթոնիա իսլահաթընա նէզարէթ իթմէք իչիւն թէչքիւլ օլընաճազ գօմիսիօնտա պիւր գաչ պուկար ազալար տախի պուլընսըն» տէյու իթտիկի թէլիֆինէ, Սատրազամ «Թիւրքիտըն տախիլի իչլերինէ Պուկարիտըն պիգիւմ իւն մուպա- հասայա կիւրիշմէսիւրի մէպտէն գա- պուլ իտէմէյիզ» տէյու «սըրըզ» կիպի պիւր ճէվապ վէրմիշ իմիշ:

— Պուկարիա վէ Պապը Ալի պէյնինտէ ճէրէհան իտէն միւլէ- քէրաթը միւլքիւլաթա ուղրաթ- մամագ մագսէտի իւն պուկար հիւքիւմէթի Մաքէթոնիալը թէչ- վիգէիլերինտէն 150 քիւշի տախիլի գազալարա մէնֆի կէօնտէրտի:

— Կէչէն բազար կիւնիւ Սօֆի.

աաա սօսիալիսթլերին միթինկի էսնասընտա զուհուր իտէն իսթի- լալ սէպէպի իւն, հիւքիւմէթ սօ- սիալիսթ ըէյիսլերինտէն Մաքիզով, Գիւրքով, Ճիտրով վէ սալիւր պիւր գաչ ըիշիի իսթինթագա ալմըշ տըր:

— Մ. Տանէվին գապինէսի իս թիֆա իթմէսի ազապինտէ, Բէ- թրպուրկա կիթմիշ օլան Սպարա- նիէ ըէյիսի Մ. Տրախան Յանքով չարչամպա կիւնիւ Սօֆիայա ալ- տէթ իթմիշ վէ թորուլարընը (Մ. Լուցքանովըն մախտուլարը) պէրապէր կէթիւրմիշ տիւր:

— Մէլսինիք պուկար ժիմիազը բրօֆէսէօրլերինտէն Մ. Լիմօն- ճիւք, Կօսթօտինով վէ Բարկով սօն հատիսէ սէպէպի իւն հապս իտիւմիշ վէ ախիւրէն սէրպէսթ պը- բազըլմըշ օլմալլէ, տօղրու Սօ- ֆիայա կէլմիշլէր տիւր:

— Սօֆիատա պէօյիւք մէթլէ- պիւր բրօֆէսէօրլերի պիւր բրօ- թէսթնամէ նէչիլի իւն՝ Բոււ- լարըն վէ Ալինա հիւքիւմէ- թինին Մաքէթոնիա պուկար- էհալիսինէ գարչը խուսուլմէթ- քեարանէ հարէքէթլերինի ֆալ ու զէ, իթմէքտէ տիւրլէր: Իչպու բրօթէսթնամէ՝ Բոււլարըն Մա- քէթոնիալը Պուկարալարը կամազ- լատըզլարըն վէ իֆիթիւրալար իթ- տիլլերինի միւլթէմէտտին էվրո- բայա լանըզլը պիւր լիսան իւն նագշ ու թաատապ իտէյօրլար:

— Սապըզ վիտին միւլթէսար- ըրֆը Մ. Կօսթօտին իվանովըն վարնա միւլթէսարըրֆըլընա թա- յին օլընտըզը «էքօ տէ Պալգան» հազմըշ տըր:

ՍԵՐՊԻՍ

Գրալ Ալէքսանտըրն գաթիլլերի վէ չէրիբի ճինայլէթ օլանլար մէ- մուրիյէթտէն թարտ օլընմատըգճա ինկիլթէրա տէվէթի Սերպիա իւն միւնասէպաթընը գաթլ՝ իտէճէկի- նի պէյանլէ, Պէկրատ էլիսինի կէրի չաղըրմըշ տըր:

— Աւստրիա վէ Բուսիա տէվ- լէթլերինտէն մաատա տիկէր հիւ- քիւմէթլեր եէնի գապինէնին մուա- մէլաթընը չիմտիլիք թապիկի իթ- մէյօրլար: Ջանիյաթա կէօրէ, հէր հալտէ միւնթիմէրին միւնէ- զաթը իտտաա իտէճէքլեր, պու պապտա բուս կազմեալարը տախի հէմէֆքեար տըրլար:

— Պէկրատ սէրայընը իհաթա իտէն վէ մուգաթէլէյի թէսհիլէյ- լէյին ալթընը ալայըն ֆախրի գօ- մանտանլըզընտան Բուսիա գը բալը նէֆրէթլէ իսթիֆա իթմիշ վէ իբի հաֆթա քէնտի ախիլի գրալիյէսինի եաա թէնսիպ էլլէմիշ տիւր:

ԱԼՄԱՆԻԱ

Սօն տէֆա մէպուսան ինթի- խապաթընտա պաշլըճա գազա- նանլար կաթոլիկէր վէ սօսիա- լիսթլեր օլուպ, զօնսէրվաթօրլար Բալթըլթակտա չօգ սանտալիա զայալ իթտիլէր: Էլիէվմ 88 կա- թոլիկ, 54 սօսիալիսթ, 14 բօյօ- նէզ էքսէրիյէթի արա գազանմըշ տըրլար: 184 մէպուս իչիւն ի- ըինճի տէֆա ըէյ աթըլաճագ իսէ- տէ, պու 184 տէն էքսէրիսի սօսիա- լիսթ գանտիտալար տըր: Նիհա- յէթ պու կիւն մէպուսարըն պիւր չէյրէկի սօսիալիսթ օլտըզընտան գօնսէրվաթօրլար վէ հիւքիւմէթ կազմեալարը հիտտէթտէն բիւր զազէպ օլուպ, ինթիլապըն լաղվ օլընմասընը իտտաա իտէյօրլար: Սօսիալիսթլերին պու մուլաֆագի- յէթի եէնի կէօմիւրք թարիֆասըն- տան իլէրի կէլտի: զիւրա մէզքիւր թարիֆէ իւլըն մէէգիւլաթ բա- հալանաճագ. պուստան իսէ պաշ- լըճա ֆըզարա վէ ամէլէ թազըմը զարարտիտէ օլաճաղընտան, պուս- լար պիւթիւն գուվէթլերի իւն սօսիալիսթ գանտիտալարա ըէյ վէրտիլէր: Շիմտի վիւքէլա ըէ- յիսի գօնթ Պիւլով իմէրտթօր իւն պէրապէր պէօյիւք միւլքիւ- լաթտա տըրլար, էկէր ինթիլա- պաթըլաղվ իթսէլէր ինթիլալտան գօրգուլուր, պու պապտա գրալ Ալէքսանտըրն նումանէսի մէյտան- տա տըր:

ՄԱՐՕՔ

Յէս էյալէթինտէ ասըլար վէ Սուլթանըն ասքերլերի պէյնինտէ էլան մուհարէպէ տէվամ իթմէքտէ տիւր: Թանճէրտէն ալընան մա- լիւմաթ, Սուլթանըն օրտուսըն եա լան Բէսսիւլըն օրտուկեհաչըն հազմըշ: Ֆազաթ պուսլար գա- չուպ տաղա սըղընմըշլար, Բիֆտէն ալընան հապատիսէ պիւնէն, հիւ- քիւմտար օլմագ տապասընտա պու- լընան Ապու Համարա՛նը ասքէր- լերի բէնտիսինի թէրք իթմիշլէր:

Մ. ԼՈՒՊԷ ԼՈՆՏՐՍՏԱ

Ֆրանսա ճուսհուրիյէթ ըէյիսի Մ. Լուպէին Լօնտրայա զիյարէթ իտէճէկի միւնասիպէթլէ Լօնտրա- տա մուլմանիւման հազըրլըզլար կէօրիւմէքտէ տիւր:

Լօնտրա պէլէտիէսի 800 քիւշի- լիք պիւր զիյաֆէթ հազըրլայօր. եէմէքլերի բիշիւրմէք իչիւն 300 խատմէ վէ աշճի խըրմէթ իտէ- ճէք. տիկէր եէմէքլերտէն մաատա 166 բիլիճ, 36 էօրտէք, 60 տիւ, 130 թապաք խամուրիշի, 68 տիւզ՝ նա չամբանեա, տօնտուրմա վէ սալիւր: Մասալար գըրմըզը, պէյազ վէ մալի էօրթիւլէրլէ տօ- նատըլաճագ ըմըշ:

ՍՕՆ ԹԷԼԷԿՐԱՖԻԱՐ

ՉԻՐԱԿԻ, 9 ՅՈՒՆԻՍ

Սերպիանըն եէնի գրալը Բէթր, պու կիճէ սաաթ 8.40 տա հարէ- քէթ իթտի: Էհալի գրուլը ալգըշ- լատը վէ պիւր պուգէթ թազտիմ իթտի: Պու էսնատէ գրալ միւ- լթէնիւր օլուպ «Եաչալըն Ջուի- ցերիա» պաղըրտըր:

ՊԵԼԿՐԱՄ, 9 ՅՈՒՆԻՍ

Բօլիթիգա սէպէպլերի իւն մահ- քիւմ օլան էլխասըն իսթիլերինի պիւր լէսթա իւն աալիյէ նազըլը իւք տէֆա եէնի գրալա թազտիմ իտուպ աֆիլըն իսթիլհամ իտէ- ճէք տիւր:

ՊԵԼԿՐԱՄ, 9 ՅՈՒՆԻՍ

Չօգ եաղմուրլարտան հասըլ օլան սէլ Ջինէչ նամ քէօյաթ 54 յիսանէ սիւրտիւ վէ 38 քիւշի զայալ իթտի: Խաասարաթ պիւր միլիոն տինար թահմին օլընըյօր:

ԲԱՌԱՐԱՆ

ՊՈՒԼԿԱՐԵՆԻՆ -- ՀԱՅԵՐԷՆ -- ՏԱՃԿԵՐԷՆ
30 ՅՈՒՆԻՍ
ԱՍՏՏՈՒՐ ՄԱՐՏԻՊԵՆԱՆ

Կը բաղկանայ 500 է աւելի երկսիւ- նակ երիտներէ, ընտիր թուղթի վրայ մաքուր տպագրութեամբ, պարունա- կելով Պուկարիւրէն լեզուի գործածա- կան գրքիթէ մոլոր բառերը եւ ոճիւրը — մօտ 30,000:

Հրատարակուած են առաջին մի քանի պրակները եւ մնացեալին տպա- գրութիւնը մեծ փութով յառաջ կը տարուի, այս նպատակով կազմուած Մասնախումբիս հսկողութեան տակ:

Բախմուրդագինն է 5 ֆր. կանխիկ ճամբու ծախքը մեր վրայ: Տաադրու- թիւնը երբ աւարտի, բաժանորդք այն առնէ պիտի ստանան Բառարանը կաղմուած: Իսկ եթէ ուղղորդներ ըլ- լան, հրատարակուած պրակիւրը հե- տըզնուէ եւս կրնանք զրկել (չօրսը մէկ ծրարով):

Տպագրութիւնը աւարտելէն վերջը գինն պիտի քարձարանայ: Դրամի փո- խարէն նամակագրօշմ չընդունուիր: Հասոյթին մէկ մասը յատկացուած է տեղոյս ազգ. վարժարանին:

Փափաքողք բաժանորդագրուելու համար գիթիւր եւ Մասնախումբիս գանձապետին հետեւեալ հասցէով՝ Տ. Մասթրոս Յակոբեան — Սօֆիա Մանթ. — Հայաստ. քաղաքներէ բաժանորդագրուելու ուղղորդներ կրնան գիթիւ նաեւ իրենց բնակած քաղաքի թաղ. կորհրդին:

ՄԱՍՆԱՆՈՒՄԲ

«ՆԱՏԷԺՏԱ»

Հայ դերասանական խումբա Պօ- ռիս թատրոնին մէջ երկարատեւ բան- թմոնանիւր եւ երգերու խաղերէ յետոյ լուրջ առաջնիւր ներկայացնելու ժամանակի սղութեան պատճառաւ ան- կարող ըլլալով, եւ ասով թատերաւոր հասարակութիւնը չկրնալով լիովին գոհացնել, այսօրուէն նոյն թատրո- նէն հրաժարած է եւ յառաջիկայ չա- բաթ օրէն սկսեալ աւելի երկուր Բիւլ ԱՅԻ պարտէզին մէջ իր ներ- կայացումները պիտի շարունակէ:

«ՆԱՏԷԺՏԱ»

Հայ Դեր. Խումբ

Одговорникъ Н. Драгулевъ

Печатница Взаимность Варна :